

**Ռաֆիկ Նահապետյան, «Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին», Երևան, ԵՊՀ հրատ., 2018, 240 էջ:**

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռաֆիկ Նահապետյանը տասնամյակներ շարունակ ծավալում է բեղուն գիտական գործունեություն: Նրա հետազոտությունները հիմնականում նվիրված են հայ ազգագրության ամենատարբեր հիմնահարցերին, հատկապես արևմտահայության էթնոմշակութային բնութագրին:

Վերջին տասնամյակում վաստակաշատ գիտնականը հատուկ ուշադրություն է դարձրել հայկական և օտար սկզբնաղբյուրներում հայ ազգագրության համար կարևոր նշանակություն ունեցող տեղեկությունների համաբերմանը և քննությանը: Հայ պատմագիրներից նա առանձին մենագրությամբ (Երևան, 2013, էջ 150) արդեն անդրադարձել է V դարի հեղինակ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» ազգագրական տեղեկություններին, ինչպես նաև ուսումնասիրություններ նվիրել Առաքել Ղավրիժեցու, արաբ և եվրոպացի ճանապարհորդների աշխատություններին:

2018 թ. լույս տեսավ պրոֆեսոր Ռ. Նահապետյանի երկար տարիների նպատակադիր հետազոտության արդյունք հանդիսացող Հայաստանի և հայերի անտիկ շրջանի կենցամշակութային իրողությունների լուսաբանման նվիրված «Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին» (Երևան, ԵՊՀ հրատ., 240 էջ) վերնագրով անչափ կարևոր սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող մենագրությունը:

Գրքում առաջին անգամ ի մի են բերվում հույն և հռոմեացի հեղինակների երկերում ավանդված տվյալներն ու մեկնությունները Հայաստանի և հայերի պատմամշակութային կյանքի, կենցաղի ու ավանդույթների վերաբերյալ: Նման վկայությունները սփռված են Ք. ա. V դարի պատմիչ Հերոդոտոսից սկսած ավելի քան հազար տարի ընդգրկող ժամանակահատվածում ապրած հունա-հռոմեական մի շարք հեղինակների (Քսենոփոն, Դիոդորոս, Ստրաբոն, Պլուտարքոս, Գայոս Պլինիոս Սեկունդոս, Ապպիանոս, Դիոն Կասսիոս, Տակիտոս) երկերում:

Հեղինակն իր առջև նպատակ է դրել ներկայացնել օտար անտիկ սկզբնաղբյուրներում պահպանված վկայությունները մեր ժողովրդի կազմավորման, տարածքային սահմանների, Հայաստանի ֆիզիկաաշխարհագրական պատկերի, բնակչության, էթնիկ կազմի, զբաղմունքների, տնտեսության բազմազան ճյուղերի, նյութական մշակույթի, հասարակական-ընտանեկան կենցաղի, սովորույթների, հավատալիքների, օտարների հետ ունեցած շփումների և այլնի վերաբերյալ: Այդ տեղեկությունները բացառիկ հավաստի ու արժեքավոր են շուրջ մեկ հազարամյակ ընդգրկող անտիկ դարաշրջանի հայոց պատմության, կենցաղի ու մշակույթի վերաբերյալ:

Հերոդոտոսի, Քսենոփոնի, Ստրաբոնի և այլոց երկերը ոչ միայն անձնական դիտումների և տպավորությունների արգասիք են, այլև իրենց ժամանակի չափանիշներով պատմաաշխարհագրական և ազգագրական մի յուրահատուկ հանրագիտարան, որոնցում հավաստվում են արժանահավատ վկայություններ ոչ միայն անտիկ շրջանի հայոց, այլև Հայաստանի հարևան երկրների պատմության ու մշակույթի յուրահատկությունների, վերջիններիս հետ հայերի քաղաքական և մշակութային շփումների մասին:

Առաջին հեղինակը, որին անդրադարձել է Ռ. Նահապետյանը, Ք. ա. V դարի հույն պատմահայր Հերոդոտոսն է, որի «Պատմություն ինը գրքից» աշխատությունը համաշխարհային պատմության և մշակույթի անգնահատելի սկզբնաղբյուր է, որում հավաստի տեղեկություններ են վերցված նաև հին Հայաստանի պատմական աշխարհագրության տարածքի, պատմական սահմանների վերաբերյալ. Հայաստան (Արմենիա) երկրի հյուսիս-արևմտյան սահմաններն ընդգրկել են Հալիս գետի ակունքները, երկրի հարավով 56,5 փարսախ՝ 340 կմ երկարությամբ ձգվում է «արքայական ճանապարհը»: Ուշագրավ է Հերոդոտոսի հայերի ծագման, Հայաստանից գանձվող հարկերի, միջազգային առևտրին մեր երկրի մասնակցության, գինու արտադրության և այնտեղից առաքվող գինու, նավագնացության, նավաշինության հնագույն երկիր լինելու, ներկատու բույսե-

րով բրդե գործվածքների նկարագարդման, ժողովրդական բժշկության և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ հաղորդումները:

Առավել մեծ հետաքրքրությամբ է կարդացվում Քսենոփոնի (Ք. ա. V-VI դդ.) «Անաբասիս» և «Կյուրոպեդիա» աշխատությունների վերլուծությունները՝ մասնավորապես մեր երկրի տարածքային ընդգրկումների, երկրի զինուժի, սպառազինության, հին հայերի՝ որպես ռազմիկ ժողովուրդ լինելու, Հայաստանի էթնիկ պատկերի, տնտեսամշակութային կյանքի վերաբերյալ: Հայաստանը երկրագործական բարիքների զինու և գարեջրի, ձիթայուղերի, օժանելիքի ստացման յուրատեսակ եղանակների հայրենիք լինելու հյուրընկալման, հյուրերին անվտանգ, ապահով ճանապարհելու, օտարականների նկատմամբ հայ արմենների գթառատ և այլ ինքնատիպ սովորությունների վերաբերյալ:

Գիտնականը հնտությամբ բացահայտում է նաև հույն և հռոմեացի մյուս պատմագիրների անկրկնելի հաղորդումների բացառիկ կարևորությունը մեր ժողովրդի էթնիկական հատկանիշների համալիր բնութագրման, հին աշխարհում հայ ժողովրդի գրաված դիրքի ու դերի, միջազգային մասշտաբով Հայաստան երկրի ռազմական, քաղաքական, մշակութային դերակատարության վերաբերյալ:

Դիողորոս Սիկիլիացու «Պատմական գրադարանը» եղել է հայոց պատմահայր՝ Մովսես Խորենացու գլխավոր աղբյուրներից մեկը: Սիկիլիացու գրքում ցույց է տրված III-II հազարամյակների վերաբերյալ ոչ միայն պատմական անցքերի արմենների հարևան նախահայկական այլ ցեղերի կենցաղամշակութային կյանքի յուրահատուկ գծերը:

Մենագրության հունական սկզբնաղբյուրներից Հայաստանյան հայերի վերաբերյալ հարուստ տեղեկություն է պարունակում Ստրաբոնի «Աշխարհագրություն» երկը: Այն լրջագույն վավերագիր-փաստաթուղթ է՝ Հայաստանի ֆիզիկա աշխարհագրական և վարչաքաղաքական բնութագրի, անմիջական հարևանների հետ ունեցած սահմանների, հայ ժողովրդի կազմավորման գործընթացի ավարտի, հայոց երկու՝ Տիգրանակերտ և Արտաշատ մայրաքաղաքների հիմնադրման ու նրանց բնակեցման, հայ ժողովրդի ծագման, հին հայերի տնտեսամշակութային կյանքի, Անահիտ դիցուհու պաշտամունքի և այլնի վերաբերյալ:

Սույն հետազոտությունը սկզբնաղբյուրային տեղեկությունների սուկական արծանագրում կամ պարզ համախմբում չէ. հեղինակը դրանք մեկիկ-մեկիկ առանձնացրել, թեմատիկ դաս-դասման է ենթարկել և ներկայացրել տեսական քննական վերլուծության և համադրման համատեքստում, ինչը առավելագույն չափով բարձրացնում է աշխատության գիտական արժեքն ու կարևորությունը:

Հույն և հռոմեացի անտիկ պատմագիրների գործերի՝ հայ ազգագրությանը վերաբերվող տեղեկությունների արժևորմանը և քննությանը նվիրված գիտական մի քանի հրապարակումներով հեղինակը նախապես հանդես է եկել գիտական հեղինակավոր ամսագրերում: Նշված հրապարակումների նյութը սույն մենագրության մեջ ներկայացվում է ամբողջացված ու համալրված ձևով:

Մենագրության շնորհիվ ակնհայտ է դառնում հին Հայաստանի պատմաքաղաքական և տնտեսամշակութային պատկերի հունա-հռոմեական պատկերացումը:

Ռ. Նահապետյանի այս նոր աշխատությունը գիտականորեն հաջողված ուսումնասիրություն է: Այն ոչ միայն օգտակար կլինի հայ ազգագրության գծով մասնագիտացող մեր ուսանողությանը, բուհերի հումանիտար ֆակուլտետների ուսանողներին, այլ նաև հայոց պատմության հիմնահարցերով ու մշակույթի ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետներին, ինչպես նաև ընթերցող լայն հասարակայնությանը:

**Արման Եղիազարյան**

Պատմական գիտությունների դոկտոր,  
ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի վարիչ